**ԵՊՀ եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի**
**գիտական խորհրդի՝ 28.04.2025 թ. կայացած նիստի թիվ 12 արձանագրություն**

**Օրակարգ**

1. Եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի ՈՒԳԸ նախագահի հաշվետվություն:
2. 2024-2025 ուսումնական տարում ամբիոնների կատարած աշխատանքների վերաբերյալ ամբիոնի վարիչների հաշվետվություն (ֆրանսիական բանասիրության ամբիոնի վարիչ՝ Գ. Սարգսյան, գերմանական բանասիրության ամբիոնի վարիչ՝ Գ. Սավոյան):
3. Ավարտական աշխատանքների ու մագիստրոսական թեզերի ինքնատիպության տոկոսի ընդունելի շեմի հաստատման հարցը:
4. Ընթացիկ հարցեր:

Եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի թիվ 12 նիստին 36 անդամներից ներկա էին 27-ը: Ֆակուլտետի դեկան Գ. Բարսեղյանը ողջունեց գործընկերներին և անդրադարձավ օրակարգի առաջին հարցին՝ ֆակուլտետի ՈՒԳԸ նախագահի հաշվետվությանը:

**ԼՍԵՑԻՆ՝** ՈՒԳԸ նախագահի 2024-2025 ուսումնական տարվա հաշվետվությունը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝** ՈՒԳԸ նախագահ Կարինե Քամալյանը ներկայացրեց 2024-2025 ուսումնական տարում կատարված աշխատանքների ցանկը ըստ ժամանակացույցի:

Սեմինար-քննարկում, որի շրջանակներում ուսանողները հնարավորություն ունեցան ծանոթանալու կառույցի աշխատանքներին, ընձեռվող հնարավորություններին, ամենամյա միջազգային գիտաժողովի և մասնակցության հնարավորությունների մասին, հղել իրենց հետաքրքրող հարցերը և ստանալ համապարփակ պատասխաններ:

Բանախոսություն («Թարգմանչական շաբաթ 2024»), որին ֆակուլտետի ՈՒԳԸ կազմը ևս մասնակցեց: Թարգմանչական շաբաթվա ընթացքում ուսանողները հնարավորություն ունեցան ծանոթանալու ոլորտի լավագույն մասնագետների հետ, լսելու բազմաբովանդակ բանախոսությունները, ստանալու մասնագիտական գիտելիքներ և ուղղել իրենց հուզող հարցերը թարգմանչական ոլորտի մասին:

Հաշվետու ուստարում ֆակուլտետի ՈՒԳԸ նախաձեռնությամբ կազմակերպվեց այցելություն Արագածոտնի մարզ՝ դեպի Օշական,

Հովհաննավանք, Սաղմոսավանք և Ամբերդ ամրոց: Այցի ընթացքում քննարկվել են գործունեությանն առնչվող բազմաբնույթ հարցեր:

Նշյալ ժամանակահատվածում ֆակուլտետի ՈւԳԸ-ն հայտարարել է անդամակազմի համալրման նոր փուլ: Ուսանողական գիտական ընկերությունն այն կառույցն է, որն անդամներին հնարավորություն է տալիս մասնակիցը դառնալ համալսարանական կյանքին՝ ստեղծելով բացառիկ գիտական հարթակ, ընձեռելով մասնագիտական հմտությունների զարգացում ու կիրառում:

Ֆակուլտետի ՈւԳԸ-ն կազմակերպում է դասախոսությունների շարք՝ նվիրված գիտահետազոտական աշխատանքներ գրելու հմտությունների զարգացմանը, որի 1-ին դասախոսությունը կարդացել է անգլերենի թիվ 2 ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ելենա Երզնկյանը: Հաջորդ դասախոսությունն անցկացնելու է միջմշակութային հաղորդակցության անգլերենի ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Շուշանիկ Պարոնյանը:

Հաշվետու ուստարում կազմակերպվել են մի շարք սեմինար-քննարկումներ, որոնք հնարավորություն են ընձեռել ուսանողներին զարգացնել օտար լեզվի խոսակցական հմտությունները և քննադատական մտածողությունը:

Եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի արտասահմանյան գրականության ամբիոնը ուսանողական գիտական ընկերության հետ համատեղ կազամակերպել է «Ինքնության բացահայտումը գրականության մեջ» խորագրով ուսանողական գիտաժողով, որը կայացել է ԵՊՀ Ծաղկաձորի «Համալսարան» ուսումնաարտադրական բազայում: Գիտաժողովը բացառիկ հնարավորություն է ուսումնասիրելու ինքնության բազմաշերտ բնույթը գրականության տեսանկյունից:

Օտար լեզուների՝ անգլերենի, ֆրանսերենի, իսպաներենի, գերմաներենի և իտալերենի փորձնական միասնական քննություններ, որոնք դիմորդներին՝ ապագա ուսանողներին հնարավորություն տվեցին ծանոթանալ ֆակուլտետի կրթագիտական գործունեությանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ՝** Հաշվետվությունը գնահատել դրական: Որոշումն ընդունվեց միաձայն:

Դեկանն անդրադարձավ օրակարգի երկրորդ հարցին՝ 2024-2025 ուստարում ֆրանսիական բանասիրության և գերմանական բանասիրության ամբիոնների կատարած աշխատանքների վերաբերյալ ամբիոնների վարիչների հաշվետվություններին:

ԼՍԵՑԻՆ՝ 2024-2025 ուստարում ֆրանսիական բանասիրության ամբիոնի կատարած աշխատանքների վերաբերյալ ամբիոնի վարիչ Գ. Սարգսյանի հաշվետվությունը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Ֆրանսիական բանասիրության ամբիոնի վարիչ Գ. Սարգսյանը նշեց, որ ամբիոնը 2024–2025 ուսումնական տարում իրականացրել է բազմաբովանդակ կրթագիտական գործունեություն: Հաշվետու ուստարվա ընթացքում իրականացվել են բազմաթիվ գիտական, մշակութային, կրթական ու միջազգային համագործակցությանն առնչվող ծրագրեր, որոնք ոչ միայն նպաստել են համալսարանում ֆրանսերենի խթանմանը, այլև նպաստել են միջազգային հարթակներում համալսարանի ներկայացմանը: Մասնավորապես՝ 2024 թ. հոկտեմբերի 7–10-ը ֆրանսիական բանասիրության ամբիոնը Սորբոնի համալսարանի հետ համագործակցության շրջանակում կազմակերպել է «Ֆրանսիական գրականության օրեր» գիտաժողովը՝ նվիրված Ժան Կոկտոյի ստեղծագործական ժառանգությանը: Գիտաժողովի ընթացքում դասախոսություններով հանդես են եկել Սորբոնի համալսարանի պրոֆեսոր Բերնար Ֆրանկոն և Սերժ Լինարեսը: Միջոցառման շրջանակում տեղի է ունեցել սեմինար-քննարկում ուսանողների մասնակցությամբ: Հաշվետու ուստարում կայացել է «Հայկական լեռնաշխարհը՝ խաղողագործության և գինեգործության նախնյաց երկիր. գինին որպես միջմշակութային հաղորդակցության բաղադրիչ» խորագրով միջազգային գիտաժողովը: Միջոցառումը կազմակերպվել է Լիլի համալսարանի, Հայաստանում Ֆրանսիայի դեսպանության, Մատենադարանի և Հայաստանի գինու պատմության թանգարանի հետ համատեղ: Գիտաժողովին մասնակցել են 50-ից ավելի բանախոսներ Ֆրանսիայից, Շվեյցարիայից, Ռումինիայից, Վրաստանից, Հունաստանից և այլ երկրներից:

Ֆրանսիայի դեսպանատան, «Ֆիլմադարան» ՀԿ-ի և Ազգային գրադարանի նախաձեռնությամբ կազմակերպվել է Ֆրանկ Կասենտիի «Կարմիր պաստառը» ֆիլմի դիտում: Հատկանշական է, որ ֆիլմի թարգմանությունը վստահված էր ամբիոնի դասախոս Աննա Մարությանին, որն իրականացրել է մի շարք ստեղծագործությունների թարգմանություններ:

Ֆրանկոֆոնիայի օրերի շրջանակում մայիսի 12-ին նախատեսված է «Հիմն սիրո» խորագրով միջոցառումը:

Բելգիայի Մոնսի համալսարանի հետ ֆրանսերենի դասավանդման շրջանակում իրականացվել է առցանց համատեղ դասընթաց:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության և Ֆրանսիայի դեսպանատան գործակցության շրջանակում մեկնարկել է վերապատրաստման ծրագիր, որին մասնակցում է ֆրանսիական բանասիրության ամբիոնի վարիչ Գայանե Սարգսյանը:
Էրազմուս+ ծրագրի շրջանակում գործընկեր համալսարաններից ամբիոնի դասախոսական ու ուսանողական կազմի համար բանախոսությամբ են հանդես եկել մի շարք այցելու պրոֆեսորներ:
2025–2026 ուսումնական տարվանից սկսած ֆակուլտետում իրագործվելու է «Միջազգային և գործարար հաղորդակցություն» կրկնակի դիպլոմով մագիստրոսի կրթական ծրագիրը Լիլի համալսարանի հետ համագործակցությամբ:
2024–2025 ուսումնական տարվա ընթացքում ֆրանսիական բանասիրության ամբիոնն իրականացրել է կրթագիտական գործունեություն՝ ուղղված ֆրանսիական լեզվամշակույթի ուսումնասիրմանն ու խթանմանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ՝** Հաշվետվությունը գնահատել դրական: Որոշումն ընդունվեց միաձայն:

**ԼՍԵՑԻՆ՝** 2024-2025 ուստարում գերմանական բանասիրության ամբիոնի կատարած աշխատանքների վերաբերյալ ամբիոնի վարիչ Գ. Սավոյանի հաշվետվությունը:

**ԱՐՀԱՏԱՅՏՎԵՑԻՆ՝** Գերմանական բանասիրության ամբիոնի վարիչ Գ. Սավոյանը նշեց, որ ամբիոնը 2024-2025 ուսումնական տարում ծավալել է կրթական ծրագրերի բարելավմանն ուղղված գործունեություն.
Դասախոսների վերապատրաստումներ.
Գերմանիայի Լյուդվիգսհաֆենի համալսարանի պրոֆեսոր Վոլֆգանգ Քրիգերն Էրազմուս+ միջազգային ծրագրի շրջանակում վերապատրաստում է անցկացրել «Հոգելեզվաբանության հիմունքներ» և տեսություններն ու մեթոդները:

Էրազմուս+ ծրագրի շրջանակում Քոբլենցի համալսարանի պրոֆեսոր Մ. Քլեմը, դոկտոր Դ. Մաքսայները, Ռ. Մաքսայները և Ֆ. Վեբերը հանդես են եկել դասախոսություններով դասախոսների և ուսանողների համար:
թ. նոյեմբերին «Գլոբալ բազմալեզվություն. գերմաներենի դերը միջմշակութային համատեքստում» խորագրով միջազգային համաժողովի շրջանակում Իվ-Օլիվեր Թաուշվիցը անցկացրել է

սեմինար՝ «Սեղանի խաղերը գերմաներենի դասավանդման ընթացքում» թեմայով, իսկ Յոհաննես Գերեռնսը հանդես է եկել օտար լեզու» դասընթացով: 2024 թ. դեկտեմբերին Քլեթ հրատարակչության խորհրդատու Ջենիֆեր Սվանդան դասախոսների և ուսուցիչների համար անցկացրել է վերապատրաստումներ «Գերմաներենը ֆիրմայում» և «Լսարանի կառավարում գերմաներենի դասընթացում» թեմաներով:

Գ. Սավոյանը, Ե. Գևորգյանը, Ռ. Քոսայանը, Ք. Սողոմոնյանը, Ն. Դիվանյանը, Ն. Շաչիլվյանը մասնակցել են Գյոթեի անվան ինստիտուտի կողմից կազմակերպված վերապատրաստումներին:
Ամբիոնի վարիչ Գ. Սավոյանը և դասախոս Մ. Նավասարդյանը մասնակցել են DAAD-ի հիմնադրման 100-ամյակին նվիրված DAAD Սեմինարների ընթացքում քննարկվել են միջազգային համագործակցությանն առնչվող բազմաբնույթ հարցեր:

Սեմինարներ ուսանողների համար.
սեպտեմբերին Լյուդվիգսհաֆենի համալսարանի պրոֆեսոր Վ. Քրիգերն անցկացրել է սեմինարների շարք գերմաներենի հնչյունաբանության, բառագիտության ու գիտական ոճի առանձնահատկությունների վերաբերյալ:
Հաշվետու ուսումնական տարում այցելու պրոֆեսոր Յ. Գերեռնսը կազմակերպել է գերմաներենի՝ որպես օտար լեզվի անվճար դասընթացներ ԵՊՀ շուրջ 40 ուսանողի համար:
Գիտակրթական գործունեություն.
թ. նոյեմբերին ամբիոնը կազմակերպել է միջազգային համաժողով՝ համատեքստում» խորագրով: Այն նպատակ ուներ ներկայացնելու գերմաներենի դերը ժամանակակից փոփոխվող աշխարհում, ինչպես նաև ստեղծելու մասնագիտական համայնք, որը կաջակցի լեզվաբաններին՝ մշակելու գերմաներենի ուսուցման ժամանակակից պահանջներին համապատասխան նորարարական լուծումներ ու ռազմավարություններ:

Ամբիոնի կարևոր ձեռքբերումներից են գերմանական հայտնի Քլեթ հրատարակչության հետ համագործակցությունը, որի շրջանակներում ամբիոնը մշակել է հանրակրթական դպրոցների 9-րդ, 11-րդ և 12-րդ դասարանների համար նախատեսված դասագրքեր՝ նոր մեթոդաբանությամբ (համահեղինակներ՝ Գ. Մ

ՈՐՈՇԵՑԻՆ՝ ձաշվետվությունը գնահատել դրական։ Որոշումն ընդունվեց միաձայն։

ԼՍԵՑԻՆ՝ Ավարտական աշխատանքների ու մագիստրոսական թեզերի ինքնատիպության տոկոսի ընդունելի շեմի հաստատման հարցը։

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Դեկան Գ. Բարսեղյանն անդրադարձավ բակալավրի ավարտական աշխատանքների նախապաշտպանության ընթացքին՝ նշելով, որ նախընտրելի է այն իրականացնել մի քանի փուլով աշխատանքների որակը բարձրացնելու նպատակով։

Գրասենյակի ղեկավար-դեկանի տեղակալ Մ. Յաղուբյանը ներկայացրեց Turnitin Similarity գործիքի կիրառման առանձնահատկությունները։ Նշվեց, որ ընթացիկ ուսումնական տարվանից ԵՊՀ ուսուցման կառավարման համակարգում կիրառվելու է նշյալ գործիքը աշխատանքների ինքնատիպության ստուգման և գրագողության դեմ պայքարի համատեքստում։

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Քննարկման արդյունքում որոշվեց գործիքի կիրառումը 2024-2025 ուստարում իրականացնել հետևյալ հարաբերակցությամբ՝

Բակալավրիատ՝ 65/35%, ինքնատիպության ընդունելի շեմ սահմանելով 65%-ը,

Մագիստրատուրա՝ 70/30%, ինքնատիպության ընդունելի շեմ սահմանելով 70%-ը։ Որոշումն ընդունվեց միաձայն։

**Ընթացիկ հարցեր**

ԼՍԵՑԻՆ՝ ԵՊՀ եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի անգլերենի թիվ 2 ամբիոնի հայցորդ **Լիլիթ Ավդալյանի** թեկնածուական ատենախոսության թեմայի հաստատման և գիտական ղեկավարի նշանակման հարցը։

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Անգլերենի թիվ 2 ամբիոնի վարիչ Ե.Երզնկյանը ներկայացրեց Լիլիթ Ավդալյանի՝ **«Կորպորատիվ խոսույթը որպես կազմակերպության կերպարի խթանման գործիք (լեզվագործաբանական վերլուծություն)»** ատենախոսության թեմայի համառոտ նկարագիրը: Հետազոտությունը նվիրված է լինելու կորպորատիվ խոսույթի լեզվագործաբանական ուսումնասիրությանը, վեր կհանվեն գործարար հաղորդակցությանը բնորոշ և վերջինիս արդյունավետությունը ապահովող մի շարք լեզվական և գործաբանական օրինաչափություններ, որոնք դեռևս բավարար կերպով չեն ուսումնասիրվել: Թեմայի արդիականությունը պայմանավորված է գիտական շրջանակում կորպորատիվ խոսույթի ոչ բավարար ուսումնասիրված լինելու հանգամանքով, ինչը մեծացնում է հետաքրքրությունը վերջինիս նկատմամբ: Խոսույթի՝ որպես կազմակերպության կերպարի խթանման գործիք լինելու հանգամանքը լեզվագործաբանական ուսումնասիրության է ենթարկվելու առաջին անգամ, ինչն էլ ապահովելու է հետազոտության գիտական նորույթը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Հաստատել անգլերենի թիվ 2 ամբիոնի հայցորդ Լիլիթ Ավդալյանի՝ **«Կորպորատիվ խոսույթը որպես կազմակերպության կերպարի խթանման գործիք (լեզվագործաբանական վերլուծություն)»** (Ժ 02.07 Ռոմանագերմանական լեզուներ մասնագիտություն) ատենախոսության թեման և գիտական ղեկավար հաստատել բ.գ.դ., պրոֆեսոր Լ. Հարությունյանին: Որոշումն ընդունվեց միաձայն:

ԵԼՀ ֆակուլտետի դեկան և
գիտխորհրդի նախագահ,
բ.գ.թ., դոցենտ՝ Գ. Ռ. Բարսեղյան

Գիտխորհրդի քարտուղար,
բ.գ.թ., դոցենտ՝ Մ. Գ. Դալալյան

28.04.2025